ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆԻ ՌՈՒԲԻԿԻ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԹ. 00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ **Ռուբեն Վազգենի Աղուզումցյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Արսեն Բաղդասարի Լոքյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Անահիտ Գագիկի Ստեփանյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ.-ի հունվարի 17-ին՝ ժամը 15^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան 52 ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2023թ. դեկտեմբերի 12-ին:

Հոգեբանության 067 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Դ. Ռ. Հայրապետյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Կառավարիչների պատրաստման գործընթացը եղել է և այսօր էլ մնում է տարբեր գիտակարգերի ուսումնասիրության առարկա: Ժամանակակից կառավարման համակարգում կառավարչին ներկայացվող պահանջները ենթարկվել են փոփոխության, այսօր առավել կարևորվում են մասնագիտական կարևոր հոգեբանական որակների առկայությունն ու զարգացվածությունը: Ժամանակակից հրամայականների պայմաններում ուշադրության կենտրոնում է կառավարչական գործունեության առանձնահատկությունների և կառավարչի հոգեբանական որակների համապատասխանության հարցը, որը կարող է հիմք հանդիսանալ արդյունավետ գործունեության և մասնագիտական զարգացման համար: Կառավարչական գործունեությունը հատուկ պահանջներ է ներկայացնում կառավարչի հոգեբանական որակներին: Կառավարիչների մասնագիտական պատրաստման գործընթացում մասնագիտական կարևոր հոգեբանական որակների դրսևորումների և շարժընթացի վերաբերյալ հետազոտությունների սակավությունը, ինչպես նաև արդի պայմաններում զարգացող հասարակության կողմից ներկայացվող պահանջներով պայմանավորված դրանց կարևորությունը, պայմանավորում են մեր կողմից ընտրված ատենախոսության թեմայի արդիականությունը և ուսումնասիրության անհրաժեշտությունը: Արագընթաց փոխակերպումների ժամանակաշրջանում կառավարչի գործունեության իրականացման տեսանկյունից կարևորվում է մասնագիտական կարևոր հոգեբանական որակների առկայությունը: Առաջ է գալիս «մասնագետի անձ-մասնագիտական գործունեություն» համատեքստում համապատասխանության ապահովման անհրաժեշտություն: Ժամանակակից պայմաններում կարևորվում է, որ մասնագիտական ուսուցման գործընթացում ստեղծվեն նախապայմաններ մասնագիտական կարևոր անձնային որակների զարգացման համար: Խնդիրն առավել արդիական ու կարևոր է կառավարման համակարգում, քանզի գործունեության առանձնահատկությունները, ժամանակի սղությունը, գերծանրաբեռնվածությունը, լարվածությունը, որոշումների կայացման համար մեծ պատասխանատվությունը և այլ գործոններ հատուկ

պահանջներ են առաջադրում կառավարչի հոգեբանական առանձնահատկությունների դրսևորումներին:

Տվյալ ոլորտում առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք, սակայն, առավելապես առնչվում են հանրային ծառայողների տարաբնույթ ուսումնասիրություններին: Մասնագիտական ուսուցման գործընթացում կառավարչական հոգեբանական որակների զարգացման նախապայմանների, ինչպես նաև ուսուցման գործընթացում այդ որակների շարժընթացի ու մասնագիտական կրթական ծրագրի հետ դրանց փոխազդեցության վերաբերյալ հետազոտությունները բացակայում են: Այս առումով մեր կողմից իրականացվող հետազոտական աշխատանքն արդիական ու կարևոր է, քանի որ կարող է հիմք հանդիսանալ կառավարիչների պատրաստման նոր հայեցակարգային դրույթների մշակման համար:

Հետազոտության օբյեկտն է անձի հոգեբանական որակների շարժընթացը կառավարչի մասնագիտական զարգացման գործընթացում:

Հետազոտության առարկան կառավարիչների մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների շարժընթացն ապահովող հոգեբանական գործոններն են:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել կառավարչի մասնագիտական զարգացման գործընթացում մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների շարժընթացն ապահովող գործոնները և դրանց հարաբերակցությունը:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ կառավարչների մասնագիտական զարգացումն ապահովող հոգեբանական որակների շարժընթացը պայմանավորված է դրանց յուրահատուկ համադրությամբ, այն է՝ հուզական ինտելեկտ, մտածողություն, կամային ինքնակարգավորում, սոցիալ-հաղորդակցման կոմպետենցիա:

Ենթավարկած. Այդ որակների շարժընթացը մասնագիտական զարգացման գործընթացում պայմանավորված է մասնագիտական կրթական ծրագրերում հոգեբանական բաղադրիչների առկայությամբ:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել և համակարգել կառավարչի մասնագիտական կարևոր անձնային որակների տեսամեթոդաբանական մոտեցումները,

2. ուսումնասիրել մասնագիտական պատրաստման գործընթացում կառավարչի մասնագիտական կարևոր անձնային որակների շարժընթացի առանձնահատկությունները,

3. ուսումնասիրել կառավարիչների մասնագիտական կարևոր անձնային որակների հարաբերակցությունները,

4. ուսումնասիրել կառավարիչների անձնային որակների արտահայտվածությունը, դուրս բերել մասնագիտական հոգեբանական դիմանկարի բաղադրիչները,

5. ուսումնասիրել փորձառու կառավարիչների հուզական ինտելեկտը՝ որպես համակարգաստեղծ հոգեբանական որակ,

6. ուսումնասիրել կառավարիչների պատրաստման մասնագիտական կրթական ծրագրերում հոգեբանական բաղադրիչների առկայությունը:

Հետազոտության ընտրանքը: Հետազոտության ընտրանքում ընդգրկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարչական տարբեր մասնագիտությունների 300 մագիստրանտներ: Մագիստրանտների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ անձնային որակների զարգացումը տեսանելի է դառնում կառավարիչների պատրաստման գործընթացում: Կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների շարժընթացը ցույց է տրվում կրթական ծրագրերի յուրացման գործընթացին զուգահեռ: Որպես փորձագետ հանդես են եկել պետական կառավարչական պաշտոնում տաս և ավել տարվա փորձ ունեցող 50 կառավարիչներ:

Հետազոտության տեսամեթոդական հիմք են ծառայել երկու հասկացությունների հետևյալ մեկնաբանումը՝ մասնագիտական զարգացումը դա կարիերան է, իսկ մասնագիտական կայացումն արդյունավետ կառավարումն է: Այս համատեքստում դիտարկվում են մասնագիտական պատրաստման գործընթացը և դրա հոգեբանական բաղադրիչները համակարգային մոտեցման տեսանկյունից: Միևնույն ժամանակ համակարգային մոտեցման տեսանկյունից է դիտարկվում նաև մասնագիտական պատրաստման գործընթացում կառավարչի անձնային որակների զարգացումը՝ շեշտադրելով անձնային որակների կառուցվածքում հուզական ինտելեկտը՝ որպես համակարգաստեղծ որակ: Աշխատանքի մեթոդաբանական հիմքում ընկած է նաև զարգացման սկզբունքը. մեր կողմից սույն աշխատանքի շրջանակներում դիտարկվել են կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակների շարժընթացի առանձնահատկությունները: Ատենախոսության հիմքում ընկած են

կառավարչի անձնային առանձնահատկությունների հայեցակարգերը (Յու. Վ. Սինյագին, Ֆ. Ֆիդլեր, Վ. Մ. Շեպել, Մ. Շոու, Մ. Վուդկոկ, Դ. Ֆրենսիս), մասնագիտական գործունեությանն անձի համապատասխանության խնդրի վերաբերյալ գիտական հայեցակարգերը (Վ. Ա. Բոդրով ու Ե. Ա. Կլիմով), ինչպես նաև մասնագետի անձնային որակների զարգացման մոտեցումները (Шадриков В. Д., Кудрявцев Т. В., Абульханова-Славская К. А., Поваренков Ю. П., Климов Е. А.): Ատենախոսության հիմքում ընկած են կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակների վերաբերյալ տեսություններն ու հետազոտությունները, մասնագիտական գործունեությանն անձի համապատասխանության խնդրի վերաբերյալ վերը նշված գիտական մոտեցումները, ինչպես նաև մասնագետի անձնային որակների զարգացման մոտեցումները:

Հետազոտության մեթոդներն են՝

- **փորձագիտական հարցում –** կառավարիչների մասնագիտական կարևոր հոգեբանական որակների համակարգման նպատակով իրականացվել է ոլորտի մասնագետների հետ փորձագիտական հարցում:
- **Կոնտենտ վերլուծություն** – կառավարիչների պատրաստման մասնագիտական կրթական ծրագրերում հոգեբանական բաղադրիչի ընդգրկվածության բացահայտման նպատակով մասնագիտական կրթական ծրագրերում ընդգրկված առարկաների բովանդակային վերլուծություն:
- **Թեստավորում** - օգտագործվել են հետևյալ ստանդարտացված մեթոդիկաները. 1. Հուզական ինտելեկտի ախտորոշման հարցարան (Ն. Հոլ) (հայերեն), 2. Սոցիալ-հաղորդակցական կոմպետենտության թեստ (հայերեն), 3. Ա. Գ. Զվերկովի և Ե. Վ. Էյդմանի «Կամային ինքնակարգավորման հետազոտման մեթոդիկա» (հայերեն), 4. Ջ. Բրուների «Մտածողության տիպը և կրեատիվության մակարդակը չափող հարցարան» (հայերեն):
- **Հարցարանի մեթոդ** - մեր կողմից կազմվել է մասնագիտական կրթական ծրագրերից բավարարվածության բացահայտման հարցարան: Այն կրում է համակարգային բնույթ, որն իր մեջ հնարավորինս ամփոփում է մասնագիտական կրթական ծրագրերի հոգեբանական կողմերը:
- Հենվելով տվյալների թույլատրելի տատանման հաշվումների արդյունքների վրա՝ հետազոտության արդյունքների քանակական վերլուծությունը կատարվել է համակարգչային Excell-2010 և SPSS-26 վիճակագրական ծրագրերի միջոցով:

Հետազոտության գիտական նորույթը. վերլուծվել և համակարգված կերպով ներկայացվել են կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակները, մասնագիտական զարգացման գործընթացում այդ որակների շարժընթացը: Առանձնացվել են մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների համախմբերը և դրանց փոխկապվածությունները, որոնց զարգացումը կարող է իրականացվել կառավարիչների պատրաստման կրթական ծրագրերում հոգեբանական բաղադրիչի ներառմամբ: Առաջադրվել են մասնագիտական պատրաստման գործընթացում մասնագետի անձնային որակների զարգացման հայեցակարգային դրույթները: Դիտարկվել է կառավարչի մասնագիտական կարևոր անձնային որակների շարժընթացը մասնագիտական պատրաստման գործընթացում, դուրս են բերվել մասնագիտական հոգեբանական դիմանկարի բաղադրիչները: Կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակներից (հաղորդակցման բանիմացություն, մտածողություն, ինքնավստահություն, գործնական հուսալիություն, որոշումների կայացման ընդունակություն, սեփական գործունեությունը գնահատելու ընդունակություն, ինքնակառավարման ունակություն, հուզական ինտելեկտ, սթրեսակայունություն, կամքի ինքնակարգավորում, դոմինանտություն, ստեղծարարություն, բանակցությունների վարման ընդունակություն) որպես նրանց մասնագիտական զարգացումը պայմանավորող անձնային հատկությունների յուրահատուկ համադրություն մեր կողմից առանձնացվել է հուզական ինտելեկտը, մտածողությունը, կամային ինքնակարգավորումը, սոցիալ-հաղորդակցման բանիմացությունը: Իրականացված փոխկապվածությունների վերլուծությունը հնարավորություն է տվել որպես կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների համակարգաստեղծ գործոն դիտարկել հուզական ինտելեկտը:

Պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

1. կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակներից (հաղորդակցման բանիմացություն, մտածողություն, ինքնավստահություն, գործնական հուսալիություն, որոշումների կայացման ընդունակություն, սեփական գործունեությունը գնահատելու ընդունակություն, ինքնակառավարման ունակություն, հուզական ինտելեկտ, սթրեսակայունություն, կամքի ինքնակարգավորում, դոմինանտություն, ստեղծարարություն, բանակցությունների վարման ընդունակություն) նրանց

մասնագիտական զարգացումը պայմանավորող անձնային որակների յուրահատուկ համադրություն են կազմում հուզական ինտելեկտը, մտածողությունը, կամային ինքնակարգավորումը, սոցիալ-հաղորդակցման բանիմացությունը,

2. ուսուցման գործընթացում կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակները որոշակի շարժընթաց են գրանցում: Շարժընթացը դրսևորվում է հաղորդակցման բանիմացության, հուզական ինտելեկտի, մտածողության ցուցանիշներում: Ստեղծարարությունը և կամային ինքնակարգավորումը նշանակալի փոփոխություններ չեն կրում,

3. կառավարիչների հոգեբանական դիմանկարը ընդգրկում է նրանց հաղորդակցման բանիմացությունը, իրենց և այլ մարդկանց հույզերի մասնակի գիտակցումն ու հասկացումը, նշանային մտածողությունը, տեղեկատվությունը եզրակացությունների և մտահանգումների միջոցով մշակելը, վարքի վերահսկողության ու ինքնակարգավորման ընդունակությունները,

4. հուզական ինտելեկտը կառավարիչների պատրաստման գործընթացում հանդիսանում է համակարգաստեղծ անձնային որակ, որն ունի դրսևորման բարձր մակարդակ փորձառու կառավարիչների խմբում,

5. կառավարիչների պաստրաստման ծրագրում հոգեբանական բաղադրիչը կազմում է ծրագրի բովանդակության փոքր մասը, ինչը բավարար հիմք չի հանդիսանում մասնագիտական կարևոր անձնային որակների զարգացման համար:

Հետազոտության տեսական նշանակությունը: Աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ համակարգված կերպով ներկայացվում են ժամանակակից կառավարչական գործունեության հոգեբանական առանձնահատկություններն ու կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակները: Իրականացված տեսական վերլուծությունների հիման վրա առանձնացվել է կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների յուրահատուկ համադրությունը, ինչը հնարավորություն է տալիս կառավարիչների մասնագիտական պատրաստման գործընթացում հենվել այդ որակների վրա: Կառավարիչների հոգեբանական ընտրության տեսական դրույթները համալրվելու են հետազոտության արդյունքներով:

Հետազոտության կիրառական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել կառավարիչների պատրաստման և վերապատրաստման գործընթացում, կառավարիչների հոգեբանական ընտրության գործընթացում: Հետազոտության արդյունքները կարող են հիմք հանդիսանալ կառավարման ոլորտի մասնագետների կրթական ծրագրերի մշակման համար: Սույն հետազոտության արդյունքները հնարավորություն են ստեղծում անցում կատարելու կառավարիչների պատրաստման առավել արդյունավետ և գիտականորեն հիմնավորված հայեցակարգի՝ կետնրոնում դիտարկելով անձը, մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակները, դրանց զարգացման առանձնահատկությունները:

Հետազոտության փուլերը: Հետազոտությունն իրականացվել է 5 փուլով:

1-ին փուլում մշակվել է փորձարարական հետազոտության ռազմավարությունը:

2-րդ փուլում իրականացվել է կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների բացահայտում փորձագիտական հարցման միջոցով:

3-րդ փուլում կատարվել է կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրություն:

4-րդ փուլում իրականացվել է փորձագիտական (ստուգիչ) խմբում հուզական ինտելեկտի՝ որպես կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների համակարգաստեղծ գործոնի ուսումնասիրություն:

5-րդ փուլում իրականացվել է մասնագիտական կրթական ծրագրերի հոգեբանական բաղադրիչների և դրանցից բավարարվածության ուսումնասիրում ըստ մասնագիտությունների:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի ընթացիկ նիստերում, «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գիտահետազոտական լաբորատորիայի նիստերում, ՀՀ և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, սեմինար-քննարկումներում (կլոր սեղան):

Աշխատանքի հիմնական արդյունքները ներկայացված են տասը հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, տեսական և հետազոտական գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, գործնական առաջարկներից և հավելվածից: Ատենախոսության ծավալը համակարգչային շարվածքով 144 տպագիր էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հիմնախնդրի արդիականությունը, ներկայացված են հետազոտության հիմնական վարկածը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, հետազոտության ընտրակազմը, ընտրված մեթոդիկաները, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունը, ինչպես նաև ատենախոսական աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Կառավարչական գործունեության հոգեբանական բաղադրիչները. արդի հայեցակարգերը եվ մոտեցումները» գլխի 1.1՝ «Ժամանակակից կառավարչական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները: Կառավարչի անձնային որակների վերլուծություն»** ենթագլխում ներկայացվում են ժամանակակից պայմաններում կառավարչական գործունեությանը բնորոշ հոգեբանական առանձնահատկությունները, իրականացվում է կառավարչական գործունեության հոգեբանական կողմերի վերաբերյալ տեսական մոտեցումների հիմնարար և բազմակողմանի վերլուծություն: Քննարկվում և վերլուծվում են կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակները, դրանց դրսևորման առանձնահատկությունները, ինչպես նաև կառավարչական գործունեության իրականացման արդյունավետության տեսանկյունից այդ անձնային որակներին ներկայացվող պահանջները:

Ատենախոսության **1.2՝ «Կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների զարգացման հիմնախնդիրը»** ենթագլխում քննարկված են մասնագիտական գործունեության գործընթացում կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների զարգացման նախապայմանները, և այդ անձնային որակների զարգացման վերաբերյալ մոտեցումները ժամանակակից գիտակարգերում: Անձի մասնագիտական զարգացման հիմնահարցը մասնագիտության և անձի

համապատասխանության առավել ընդհանրական հիմնահարցի արտացոլում է:

Ատենախոսության **1.3՝ «Կառավարիչների մասնագիտական պատրաստման գործընթացի հոգեբանական յուրահատկությունները»** ենթագլխում քննարկված են իրականացված տեսական վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս առաջ քաշելու մեր փորձարարական աշխատանքի մեթոդաբանությունը: Իրականացված վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ առկա է անհրաժեշտություն՝ համակարգելու և դուրս բերելու կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակները: Սույն ուղղությամբ առկա են բազմաթիվ մոտեցումներ, որոնց վրա հիմնվելով էլ մենք առաջնորդվել ենք մեր աշխատանքում: Այս ուղղությամբ նպատակահարմար է փորձագիտական գնահատման մեթոդի կիրառությունը, որի արդյունքները հնարավորություն կտան համակարգելու կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Անձի հոգեբանական որակների զարգացումը պայմանավորող գործոնների հետազոտության արդյունքները» գլխի 2.1՝ «Հետազոտության գործիքակազմ, մեթոդներ, կազմակերպման և համակազմի նկարագիր»** ենթագլխում ներկայացված են հետազոտության իրականացման տրամաբանությունը, ռազմավարությունը, մեթոդները ու ներգրավված ընտրակազմի հիմնավորումը: Մանրամասն ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված քանակական և որակական վերլուծության, մաթեմատիկական վիճակագրության մեթոդները, ինչպես նաև թեստավորման շրջանակում օգտագործված մեթոդիկաների էությունը:

Ատենախոսական աշխատանքի **2.2՝ «Հետազոտության մեթոդների ընտրության հիմնավորում»** ենթագլխում ներկայացվում է սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում կոնկրետ ընտրված մեթոդների ու մեթոդիկաների նպատակահարմարությունը, ինչպես նաև դրանց բնութագրերը:

Ատենախոսական աշխատանքի **2.3՝ «Մասնագիտական կրթական ծրագրերի հոգեբանական բաղադրիչների հետազոտության արդյունքների վերլուծություն»** խորագրով ենթագլխում մանրամասն ներկայացված է կառավարիչների պատրաստման մասնագիտական կրթական ծրագրերից բավարարվածության հոգեբանական բաղադրիչների

դուրսբերման և ուսումնասիրման նպատակով իրականացված մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակային վերլուծության արդյունքները: Իրականացված վերլուծության արդյունքում բացահայտվել է, թե յուրաքանչյուր կրթական ծրագրում որքանով են արտահայտված մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների զարգացմանն ուղղված առարկայական ծրագրերը: Առարկայական ծրագրերի վերլուծության արդյունքում ակնհայտ դարձավ, որ հոգեբանական բաղադրիչ պարունակող ծրագրերն ուղղված են ոլորտի վերաբերյալ մասնագիտական գիտելիքների փոխանցմանը, անձային որակների զարգացման նպատակ չեն հետապնդում: Այդ է պատճառը, որ այդ առարկայական ծրագրերը չեն հանգեցնում մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների զարգացմանն ուսուցման գործընթացում:

Ատենախոսական աշխատանքի **2.4՝ «Կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների փորձագիտական գնահատման արդյունքների վերլուծություն»** ներկայացվում է կառավարչական գործունեության համար կարևոր անձնային որակների բացահայտմանն ուղղված փորձագիտական հարցման արդյունքները, որից ակնհայտ է դառնում, որ այդ որակներն են՝ հուզական ինտելեկտ, մտածողության ճկունություն, ինքնատիպություն, ստեղծարար ներուժ, ստեղծարարություն, հաղորդակցման հմտություններ-սոցիալական հաղորդակցման բանիմացություն, կամային ինքնակարգավորում:

Ատենախոսական աշխատանքի **2.5՝ «Մասնագիտական ուսուցման գործընթացում կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների շարժընթացի ուսումնասիրության արդյունքների վերլուծություն»** ենթագլխում ներկայացված է իրականացված հետազոտության արդյունքում ստացված քանակական տվյալները, վեր են հանվել միջին ցուցանիշները և ստանդարտ շեղումները, հնարավորություն է տալիս դուրս բերել կառավարչական որակների արտահայտվածության և դինամիկայի առանձնահատկությունները մասնագիտական պատրաստման գործընթացում, որը հանդիսանում է կառավարիչների պատրաստման հոգեբանական համակարգի բաղադրիչներից մեկը: Մասնագիտական պատրաստման գործընթացում կառավարչական որակների շարժընթացի առանձնահատկություններից է դրանց փոփոխությունների քիչ ենթարկվելը. կառավարչական որակների

շարժընթաց նկատվում է միան որոշ մասնագիտությունների պարագայում. հուզական ինտելեկտի գումարային ցուցանիշը բարձրանում է միայն հոգեբանության և հանրային կառավարման մասնագիտությունների մագիստրանտների մոտ:

Ատենախոսական աշխատանքի **2.6՝ «Կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների համահարաբերակցական վերլուծություն»** ենթագլխում կատարվել է հետազոտության արդյունքների վերլուծություն համակարգչային Excell-2010 և SPSS-26 վիճակագրական ծրագրերի միջոցով: Իրականացվել է ընտրանքի նորմալ բաշխվածության ստուգում Վերլուծվել են փորձարարական խմբում հոգեբանական գործոնների միջև համահարաբերակցային կապերը: Փոխկապվածությունների վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում, որ կառավարիչների հուզական ինտելեկտի և սոցիալ-հաղորդակցական ապաշնորհության միջև առկա է բացասական կոռելյացիոն փոխկապվածություն(r=-0.491, P< 0,001), ինչը նշանակում է, որ որքան վատ են նրանք կարողանում գիտակցել և կառավարել իրենց և այլ մարդկանց հույզերը, այնքան ավելի դժվարությամբ են հաղորդակցվում այլ մարդկանց հետ, միջանձնային փոխհարաբերություններ դժվարությամբ են հաստատում, չեն կարող ունենալ շփման լայն շրջանակ, հաղորդակցման գործընթացում կառավարել իրենց և ուրիշների հույզերն ու զգացմունքները: Ցածր հուզական ինտելեկտն ուղեկցվում է սոցիալ-հաղորդակցական ապաշնորհությամբ: Հուզական ինտելեկտի և անորոշության հանդեպ անհամբերության ցուցանիշների միջև ևս առկա է բացասական կորելյացիոն փոխկապվածություն(r=-0.428, P< 0,001), ինչը վկայում է այն մասին, որ եթե անձի մոտ հուզական ինտելեկտը զարգացած չէ, նա անորոշությունը չի ընկալում որպես բնական երևույթ: Արձագանքում է անկանխատեսելի իրավիճակներին ավելի շատ տագնապով, քան հետաքրքրությամբ: Հուզական ինտելեկտի ցածր արտահայտվածությունը կարող է ուղեկցվել անորոշության հանդեպ անհանդուրժողականությամբ: Ապագա կառավարիչների մոտ առկա է նաև բացասական կոռելյացիոն փոխկապվածություն հուզական ինտելեկտի և անհաջողություններից խուսափման ձգտման միջև(r=-0.509, P<0,001): Սեփական և այլ մարդկանց հույզերի ճանաչման և կառավարման ընդունակության թույլ զարգացվածությունն ուղեկցվում է անհաջողություններից խուսափելու

բարձր ձգտմամբ, ինչի արդյունքում անձը դժվարությամբ է ընդգրկվում նոր գործերի մեջ, դժվարությունների և անորոշության նկատմամբ անկայունություն է դրսևորում: Բացասական կոռելյացիոն կապ է առկա նաև հուզական ինտելեկտի և ֆրուստրացիոն անհանդուրժողականության միջև(r=-0.382, *P< 0,01*):

Որքան ապագա կառավարիչների մոտ թույլ է զարգացած հուզական ինտելեկտը, այնքան ավելի վատ են նրանք կարողանում հսկել իրենց հակումներն ու ձգտումները, հակադրվել դժվարություններին, դրսևորել ֆրուստրացիոն հանդուրժողականություն: Ապագա կառավարիչների հուզական ինտելեկտի և համառության ցուցանիշի միջև առկա է դրական կոռելյացիոն կապ(r=0.486, P<0,001): Հուզական ինտելեկտի և ինքնատիրապետման ցուցանիշների միջև ևս առկա է դրական կապ(r=0.416, P< 0,001): Որքան զարգացած է հուզական ինտելեկտը, այնքան ինքնատիրապետման մակարդակը բարձր է: Բարձր դրսևորվածությունն ուղեկցվում է հուզական կայունությամբ, տարբեր իրավիճակներում վարքի վերահսկողության ընդունակությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կառավարչի մասնագիտական զարգացման գործընթացում անձի հոգեբանական որակների շարժընթացի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման հիմնախնդրի շուրջ կատարած տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Կառավարչի մասնագիտական կարևոր հոգեբանական որակներն են հաղորդակցման բանիմացությունը, մտածողությունը, ինքնավստահությունը, գործնական հուսալիությունը, որոշումների կայացման ընդունակությունը, սեփական գործունեությունը գնահատելու ընդունակությունը, ինքնակառավարման ունակությունը, սեփական և այլ մարդկանց հույզերի կառավարման ընդունակությունը, սեփական և այլ մարդկանց հույզերի հասկացման ընդունակությունը, սթրեսակայունությունը, կամքի ինքնակարգավորումը, դոմինանտությունը, ստեղծարարությունը, բանակցությունների վարման ընդունակությունը: Կառավարչի մասնագիտական զարգացումը պայմանավորված է մասնագիտական կարևոր հոգեբանական որակների յուրահատուկ համադրությամբ, այն է՝

հուզական ինտելեկտ, մտածողություն, կամային ինքնակարգավորում, սոցիալ-հաղորդակցման բանիմացություն:

2. Կառավարիչների հաղորդակցման բանիմացության բոլոր բաղադրիչները, բացի կարգավիճակը բարձրացնելու ձգտումից, ունեն միջինից ցածր արտահայտվածություն, և նշանակալի փոփոխության չեն ենթարկվում: Կարգավիճակը բարձրացնելու ձգտումը բարձրանում է, նրանք բավարարված չեն իրենց ներկա կարգավիճակով և ձգտում են բարձրացնել այն, հասնել իշխանության, ավելի բարձր դիրք գրավել: Հուզական ինտելեկտի ցուցանիշը երկու փուլերում էլ միջին արտահայտվածություն ունի: Կառավարիչները մասամբ են գիտակցում և հասկանում իրենց հույզերը: Որոշ դեպքերում նրանք կարող են դժվարությամբ հասկանալ այլ մարդկանց հուզական դրսևորումները: Ըստ մասնագիտությունների դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ հուզական ինտելեկտի գումարային ցուցանիշը բարձրանում է միայն հոգեբանության և հանրային կառավարման մասնագիտությունների մագիստրանտների մոտ: Զարգանում է սիմվոլիկ և նշանային մտածողությունը, կառավարիչները սկսում են ավելի լավ վերափոխել տեղեկատվությունը եզրակացության և մտահանգումների կանոնների օգնությամբ: Ստեղծարարության ցուցանիշը նշանակալի փոփոխություններ չի կրում: Կամային ինքնակարգավորման ցուցանիշը միջին է, ու նշանակալի փոփոխության չի ենթարկվում:

3. Կառավարիչների հոգեբանական դիմանկարի բաղադրիչներն են. զարգացած են կառավարիչների հաղորդակցման ընդունակությունները: Հեշտությամբ են միջանձնային փոխհարաբերություններ հաստատում, կողմնորոշվում և որոշումներ կայացնում անորոշության իրավիճակում, դրսևորում են ինքնուրույնություն: Նրանք բավարարված չեն իրենց ներկա կարգավիճակով և ձգտում են բարձրացնել այն, հասնել իշխանության, ավելի բարձր դիրք գրավել: Մասամբ են գիտակցում և հասկանում իրենց հույզերը: Որոշ դեպքերում կարող են դժվարությամբ հասկանալ այլ մարդկանց հուզական դրսևորումները: Զարգացած է նշանային մտածողությունը: Տեղեկատվությունը վերափոխում են եզրակացության և մտահանգումների կանոնների օգնությամբ: Արտահայտված են վարքի վերահսկողության ու ինքնակարգավորման ընդունակությունները, նպատակասլաց են, ձգտում են սկսած գործը միշտ ավարտին հասցնել:

4. Կառավարչների մասնագիտական կարևոր հոգեբանական որակների յուրահատուկ համադրությունում (հուզական ինտելեկտ, մտածողություն,

կամային ինքնակարգավորում, սոցիալ-հաղորդակցման բանիմացություն) հուզական ինտելեկտը հանդիսանում է համակարգաստեղծ որակ: Փորձառու կառավարիչների հուզական ինտելեկտն ունի բարձր արտահայտվածություն:

5. Կառավարիչների պաստրաստման ծրագրում հոգեբանական բաղադրիչը բավարար չափով ներառված չէ, ինչը հիմք է հանդիսանում մասնագիտական կարևոր անձնային որակները ուսուցման առանձին փուլում զարգացնելու համար, որի հիմք կհանդիսանան մասնագիտական գիտելիքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Խաչատրյան Ա. Ռ., Կառավարիչների սթրեսակայունության դրսևորման առանձնահատկությունները, Արդիականության մարտահրավերները. Փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ: ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 401-404:

2. Хачатрян А. Р., Особенности проявления эмоционального интеллекта в процессе профессионального обучения управленцев, Развитие личности в контексте стандартизации образования: обновление смыслов: сборник научных статей по итогам проведения международного круглого стола, 19 апреля 2017 г., Белгород: ООО «Эпицентр», 2017, с. 139-144

3. Хачатрян А. Р., Исследование особенностей мышления управленца, Публичное управление, научный журнал, Ереван, 2017, N3-4, с. 333-338

4. Խաչատրյան Ա. Ռ., Կառավարիչների սոցիալ-հաղորդակցական բանիմացության հետազոտում, Արդի հոգեբանություն, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» VI միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2017թ., էջ 120-125

5. Խաչատրյան Ա. Ռ., Ապագա կառավարիչների հուզական ինտելեկտի և մասնագիտական կարևոր անձնային որակների կապերի հետազոտություն, Հանրային կառավարում գիտական հանդես, 2018, N1-2, էջ 278-284

6. Խաչատրյան Ա. Ռ., Կառավարիչների սոցիալ-հաղորդակցական բանիմացության և մասնագիտական կարևոր որակների

փոխկապվածությունը, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, 2018, N1, էջ 202-207

7. Խաչատրյան Ա. Ռ., Ապագա կառավարիչների սթրեսակայունության և կամային ինքնակարգավորման դրսևորման առանձնահատկությունները և փոխպայմանավորվածությունը, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, Երևան, 2018, N1, էջ 134-143

8. Խաչատրյան Ա. Ռ., Կառավարիչների մասնագիտական պատրաստման գործընթացի հոգեբանական մոտեցումները, Կրթությունը և գիտությունը Արցախում, Օգոստոս-դեկտեմբեր 2018, 3-4, էջ 14-19

9. Хачатрян А. Р., Психологические компоненты эффективности профессиональных образовательных программ, Высшая школа: опыт, проблемы, перспективы Материалы XII Международной научно-практической конференции, Москва, РУДН, 28–29 марта 2019 г., ст. 64-69

10. Khachatryan A. R., Personal qualities important for the professional activity of the modern middle level manager, Proceedings 9th international conference "The current issues in theoretical and applied psychology", Yerevan, 13-15 october, 2023, p. 79-80

ХАЧАТРЯН АНИ РУБИКОВНА

ДИНАМИКА ПСИХОЛОГИЧЕСКИХ КАЧЕСТВ ЛИЧНОСТИ В ПРОЦЕССЕ ПРОФЕССИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ УПРАВЛЕНЦА

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01- «Общая психология. Теория и история психологии. Психология личности».

Защита диссертации состоится 17 января 2024 г., в 15:00 на заседании специализированного совета по психологии 067 ВАК по присуждению ученых степеней при Ереванском государственном университете, по адресу: 0025, ул. Абовяна 52 а, Ереван, Армения.

РЕЗЮМЕ

Актуальность темы: Процесс подготовки менеджеров был и остается предметом изучения различных дисциплин. В современной системе управления требования, предъявляемые к руководителю, претерпели изменения, сегодня большее значение имеет наличие и развитие профессионально важных психологических качеств. В условиях современных императивов в центре внимания находится вопрос соответствия особенностей управленческой деятельности психологическим качествам менеджера, которые могут стать основой эффективной деятельности и профессионального развития. Управленческая деятельность предъявляет особые требования к психологическим качествам менеджера.

Объектом исследования является динамика психологических качеств личности в процессе профессионального развития менеджера.

Предметом исследования являются психологические факторы, обеспечивающие развитие личностных качеств, важных для профессиональной деятельности менеджеров.

Цель исследования. Изучить факторы, обеспечивающие развитие профессионально важных личностных качеств и их соотношение в процессе профессионального развития менеджера.

Гипотеза исследования. Считается, что развитие психологических качеств, обеспечивающих профессиональное развитие менеджеров, происходит благодаря их уникальному сочетанию, а именно: эмоциональному интеллекту, мышлению, волевой саморегуляции, социально-коммуникативной компетентности.

Предположение: Развитие этих качеств в процессе профессионального развития обусловлено наличием психологического компонента в профессиональных образовательных программах.

Задачи исследования.

1. Изучить и согласовать теоретикометодические подходы профессионально важных личностных качеств руководителя.

2. Изучить особенности процесса формирования профессионально важных личностных качеств менеджера в процессе профессиональной подготовки.

3. Изучить корреляции профессионально важных личностных качеств менеджеров.

4. Изучить проявление личностных качеств менеджеров, выявить компоненты профессионального психологического портрета.

5. Изучить эмоциональный интеллект опытных менеджеров как системообразующее психологическое качество.

6. Изучить наличие психологической составляющей в профессиональных образовательных программах подготовки менеджеров.

Научная новизна исследования.

Новизна данного исследования заключается в том, что были проанализированы и систематизированы личностные качества, важные для профессиональной деятельности менеджера, а также прогресс этих качеств в процессе профессионального развития. Выделены важные для профессиональной деятельности совокупности личностных качеств и их взаимосвязи, развитие которых может осуществляться путем включения психологического компонента в образовательные программы подготовки менеджеров. Выдвинуты концептуальные положения развития личностных качеств специалиста в процессе профессиональной подготовки. Прослежена тенденция развития профессионально важных личностных качеств менеджера в процессе профессиональной подготовки, выявлены компоненты профессионального психологического портрета.

Теоретическая и практическая значимость исследования. Теоретическая значимость работы заключается в систематическом изложении психологических особенностей современной управленческой деятельности и личностных качеств, важных для профессиональной деятельности менеджера. На основе проведенного теоретического анализа выявлено уникальное сочетание важных для профессиональной деятельности менеджера личностных качеств, позволяющее опираться на эти качества в процессе профессиональной подготовки менеджеров. Теоретические положения психологического отбора менеджеров будут дополнены результатами исследования.

Экспертиза исследования. Результаты исследования обсуждались на заседаниях кафедры общей психологии ЕГУ, кафедры психологии управления Академии государственного управления Республики Армении, заседаниях научно-исследовательской лаборатории «Психология управленческой деятельности», многих республиканских и международных конференциях, семинарах-дискуссиях.

Структура работы. Диссертация состоит из введения, двух глав, выводов, списка литературы и приложений. Общий объем работы составляет 144 страницы.

По теме диссертации опубликовано 10 статей.

KHACHATRYAN ANI RUBIK

DYNAMICS OF PSYCHOLOGICAL QUALITIES OF PERSONALITY IN THE PROCESS OF PROFESSIONAL DEVELOPMENT OF A MANAGER

Dissertation thesis for the scientific degree of PhD in psychological sciences in speciality 19.00.01 - General psychology, theory and history of psychology, psychology of personality.

The defence of the dissertation will be held on January 17, 2023, at 15^{00} at the session of the Specialized Council 067 in Psychology of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia at Yerevan State University. Address: 0025, Yerevan, st. Abovyan 52 a.

SUMMARY

The relevance of the topic. Of dissertation research is due to the fact that the process of training managers has been and remains the subject of study in various disciplines. In the modern management system, the requirements for a manager have undergone changes; today the presence and development of professionally important psychological qualities is of greater importance. In the context of modern imperatives, the focus is on the issue of compliance of the characteristics of management activities with the psychological qualities of a manager, which can become the basis for effective activities and professional development. Management activities place special demands on the psychological qualities of a manager.

The object of the research is dynamics of psychological qualities of an individual in the process of professional development of a manager.

The subject of the study is the psychological factors that ensure the development of personal qualities important for the professional activities of managers.

The aim of the study: To study the factors that ensure the development of professionally important personal qualities and their relationship in the process of professional development of a manager.

The hypothesis of the reserach: It is believed that the development of psychological qualities that ensure the professional development of managers occurs due to their unique combination, namely: emotional intelligence, thinking, volitional self-regulation, and social and communicative competence.

Assumption: The development of these qualities in the process of professional development is due to the presence of a psychological component in professional educational programs.

Research issues.

1. Study and agree on theoretical and methodological approaches to professionally important personal qualities of a leader.

2. To study the features of the process of formation of professionally important personal qualities of a manager in the process of professional training.

3. To study the correlations of professionally important personal qualities of managers.

4. To study the manifestation of personal qualities of managers, to identify the components of a professional psychological portrait.

5. Study the emotional intelligence of experienced managers as a system-forming psychological quality.

6. To study the presence of a psychological component in professional educational programs for training managers.

Scientific novelty of the reserach.

The novelty of this study lies in the fact that personal qualities important for the professional activity of a manager were analyzed and systematized, as well as the progress of these qualities in the process of professional development. A set of personal qualities that are important for professional activity and their relationships are identified, the development of which can be carried out by including a psychological component in educational programs for training managers. Conceptual provisions for the development of a specialist's personal qualities in the process of professional training have been put forward. The tendency for the development of professionally important personal qualities of a manager in the process of professional training has been traced, and the components of a professional psychological portrait have been identified.

Theoretical and practical significance of the research.

The theoretical significance of the work lies in the systematic presentation of the psychological characteristics of modern management activities and personal qualities important for the professional activities of a manager. Based on the theoretical analysis carried out, a unique combination of personal qualities that are important for the professional activity of a manager has been identified, which makes it possible to rely on these qualities in the process of professional training of managers. The theoretical principles of psychological selection of managers will be supplemented by the results of the study.

The expertice of the reserach. The results of the study were discussed at meetings of the Department of General Psychology of Yerevan State University, the Department of Management Psychology of the Academy of Public Administration of the Republic of Armenia, meetings of the research laboratory "Psychology of Management Activity", many republican and international conferences, seminars and discussions.

The structure of the thesis. The dissertation consists of an introduction, two chapters, conclusions, list of references and appendices. The total volume of the work is 144 pages.

10 articles have been published on the topic of the thesis.